ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

Ք.Երևան «09» նոյեմբերի 2023թ.

ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/46 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգի շրջանակներում նախաձեռնած գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության կարիքների համար՝ համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով 2022 թվականի սեպտեմբերի 22-ին հայտարարվել է ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/46 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը:

2022 թվականի հոկտեմբերի 6-ի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստում մրցույթի մասնակից «Սադոյան» ՍՊԸ /ՀՀ, Ք.Երևան, Չարենցի 40, բն. 30, ՀՎՀՀ՝ 02647494/ 2,3,8,9,10,15,16,23,24,25 չափաբաժինների մասով որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից ճանաչվել է ընտրված մասնակից: 2022 թվականի հոկտեմբերի 21-ին հիմք ընդունելով ՀՀ գնումների մասին օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ ծանուցել է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: 2022 թվականի հոկտեմբերի 28-ին կողմերի միջև կնքվել է ապրանքների մատակարարման պայմանագիր, որով «Սադոյան» ՍՊԸ պարտավորվել է մատակարարել պայմանագրով սահմանված ապրանքները պայմանագիրը ստորագրելուց հետո 100 օրվա ընթացքում: 2023 թվականի փետրվարի 1-ին կողմերի միջև կնքվել է համաձայնագիր, որով պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները երկարացվել են ևս 30 օրացուցային օրով:

Մասնակցի կողմից 25 չափաբաժնի մասով մատակարարումը մինչև օրս չի իրականացվել, որով խախտվել է պայմանագրի հավելված 1-ով սահմանված մատակարարման ժամկետները:

Հաշվի առնելով «Սադոյան» ՍՊ ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարումը և հիմք ընդունելով Պայմանագրի 8.11 կետը՝ Ընկերությունը միակողմանի լուծել է ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/46-2 գնման պայմանագիրը:

Երևան, Նորք 0011
Գ. Հովսեփյան 26
հեռ.՝ +374 10 65 00 15
էլ. հասցե՝ support@armtv.com
www.1tv.am

ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԵՌՈՒՍՏԱԼԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ելնելով վերոգրյալից «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը 2023 թվականի նոյեմբերի 6-ին ծանուցել է «Սադոյան» ՍՊ ընկերությանը պայմանագիրը միակողմանի դադարեցնելու մասին, որը հրապարակվել է նաև gnumner.am կայքում:

Ելնելով վերոգրյալից և Հիմք ընդունելով ՀՀ Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի Ա ենթակետը (խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը).

ՈՐՈՇԵՑԻ

«Սադոյան» ՍՊԸ -ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Առդիր՝ 1 (մեկ) փաթեթ:

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն **Հովհաննես Մովսիսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԼԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ • ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԼԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ • ՀՀ Ք. ԵՐԵՎԱՆ • 01540062 • ՀՀ Ք. ԵՐԵՎԱՆ • ՓԲԸ "ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԼԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ" • OJSC "PUBLIC TELEVISION COMPANY OF ARMENIA" • OJSC "ОБЩЕСТВЕННАЯ ТЕЛЕКОМПАНИЯ АРМЕНИИ"

Կատարող՝
Գործադիր տնօրենի տեղակալ-
ֆինանսական տնօրեն
Արարատ Հակոբյան
Հեռ՝ 010 65 00 15 /1-58/

Երևան, Նորք 0011
Գ. Հովսեփյան 26
հեռ.՝ +374 10 65 00 15
էլ. հասցե՝ support@armtv.com